ՍԴ3/0055/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27 դեկտեմբերի 2024 թվական քՍ.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 13-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի նոյեմբերի 27-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Խաչիկ Մելիքի Հովհաննիսյանի

վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ 90159923 (ՍԴ3/0055/01/23) քրեական վարույթը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի նոյեմբերի 28-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2024 թվականի ապրիլի 15-ին թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթը վերաբաշխվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ.Առաքելյանին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի ապրիլի 19-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունիսի 4-ին որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունիսի 28-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Վճռաբեկ դատարանի քրեական պալատը 2024 թվականի հուլիսի 15-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթն ըստ ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հուլիսի 29-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

4. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի նոյեմբերի 21-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

5. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 13-ին որոշում է կայացրել թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

6. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի դեկտեմբերի 23-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

7. 2020 թվականի նոյեմբերի 9-ին Խաչիկ Մելիքի Հովհաննիսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 3-րդ մասով այն բանի համար, որ *«նա, ՀՀ կառավարության՝ 27.09.2020 թվականի թիվ 1586-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված Ռազմական դրության ժամանակ՝ ընդհանուր զորահավաքի միջոցով զորակոչված և որպես պահեստազորային հաշվառված լինելով ՀՀ ՊՆ համապատասխան զորամասում, մարտական խնդիր կատարելու համար մեկնել է առաջնագիծ, որից հետո՝ 06.10.2020 թվականին, զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով ինքնակամ թողել է ծառայության վայրը՝ կատարելով դասալքություն: (…)»*[1]:

8. Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի նոյեմբերի 21-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն վարույթով քննիչի կողմից, մինչ նախնական դատաքննությունը Դատարան է ուղարկվել մեղադրական եզրակացությանը կից վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների տեղեկանքի ճշգրտված օրինակը, որտեղ առկա են մասնավոր մասնակցի և վկաների բնակության ճիշտ հասցեները, այն կցվել է քրեական գործին:*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթ 30:

Թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթով մեղադրական եզրակացությանը կից վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների տեղեկանքի համաձայն՝ քրեական վարույթին ներգրավված են մեղադրյալը, 8 (ութ) վկաները, բացի այդ, մեղադրյալն ունի երկու պաշտպաններ, ովքեր բնակվում են Արարատի մարզում, այսինքն՝ վարույթին ներգրավված են ընդհանուր 11 (տասնմեկ) անձինք, որոնցից վկաներից՝ Սևակ Արամայիսի Ավետիսյանը, Ռուբեն Վլադիմիրի Վարդանյանը, Նաիրի Մեսրոպի Գասպարյանը բնակվում են Վայոց ձորի մարզում, Բորիս Վարդանի Հարությունյանը, Ռոբերտ Արարատի Հայրապետյանը, ինչպես նաև մեղադրյալ Խաչիկ Մելիքի Հովհաննիսյանը և նրա պաշտպաններ Լիանա Գասպարյանը, Լուսինե Պողոսյանը բնակվում են Արարատի մարզում, իսկ վկաներից՝ Անդրանիկ Արայիկի Արզումանյանը, Արիս Ջարմայիլի Բրուտյանը և Վահագն Վլադիմիրի Հայրապետյանը բնակվում են այլ դատարանների դատական տարածքներում:

(…)

Տվյալ դեպքում թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթով վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում են Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Նկատի ունենալով, որ վարույթի մասնավոր մասնակիցները և վկաների մեծամասնությունը բնակվում են Արարատի և Վայոց ձորի մարզերում, ինչպես նաև մեղադրյալը համաձայնվել է, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցվի Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, Դատարանը գտնում է, որ սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունն անհրաժեշտ է փոխել և այն ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (…)»[2]:

9. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի դեկտեմբերի 13-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործի փաստական հանգամանքները*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 110-114:

գնահատելով վերը շարադրված իրավական նորմերի համատեքստում՝ հարկ է արձանագրել, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փոխելով վարույթի տարածքային ընդդատությունը, առերևույթ չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում հետևյալը.

- Վկա Ռուբեն Վլադիմիրի Վարդանյանը, որը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դիտարկվել է որպես Վայոց ձորի մարզի բնակիչ, բնակվում է Սյունիքի մարզի Կապան քաղաքի Բաղաբերդի 26/4-րդ բնակարանում (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, գ.թ. 158, ինչպես նաև՝ մեղադրական եզրակացությանը կից վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների տեղեկանքի «ճշգրտված» օրինակը): Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ենթադրաբար Mulberry համակարգի միջոցով արտահանված տվյալները՝ Ռ.Վարդանյանի՝ Վայոց ձորի մարզում հաշվառված լինելու վերաբերյալ, չեն կարող բավարար համարվել՝ արձանագրելու, որ նշված անձը չի բնակվում Սյունիքի մարզում:

- Վկա Ռոբերտ Արարատի Հայրապետյանը, որը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից դիտարկվել է որպես Արարատի մարզի բնակիչ, բնակվում է Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Գետափնյա փողոցի 7/7-րդ տանը (տե՛ս քրեական գործ, հատոր 1-ին, գ.թ. 25): Այս համատեքստում անդրադառնալով քննիչի կողմից, մինչև նախնական դատաքննությունը, դատարան ուղարկված՝ մեղադրական եզրակացությանը կից վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների տեղեկանքի «ճշգրտված» օրինակին, որտեղ, ըստ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, առկա են մասնավոր մասնակցի և վկաների բնակության «ճիշտ» հասցեները, Դատարանը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում իրավասու դատարան հանձնված մեղադրական եզրակացության կամ դրա հավելվածների՝ քննիչի կողմից «ճշգրտման» որևէ ընթացակարգ: Նշված փաստաթղթերը, Դատարանի համոզմամբ, կարող են «ճշգրտվել», իսկ ավելի կոնկրետ՝

համապատասխանեցվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի պահանջներին բացառապես հանրային մեղադրողի կողմից՝ վկայակոչված օրենսգրքի 312-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով: Նման պայմաններում, Դատարանի համար առնվազն տարակուսելի են քրեական գործի 5-րդ հատորի 86-87-րդ թերթերում զետեղված փաստաթղթի ձևավորման հանգամանքները և դրանում առկա տվյալների վրա հղում կատարելու՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի մոտեցումը:

Վերոգրյալի հետ մեկտեղ՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է անձի՝ դատական շրջապտույտի մեջ հայտնվելու վտանգ՝ հետևյալ պատճառաբանությամբ. Այսպես, թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական գործը Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (նախագահությամբ՝ դատավոր Ռ.Առաքելյանի)՝ 2024 թվականի հունիսի 4-ի որոշմամբ ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որտեղից էլ՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ վարույթի տարածքային ընդդատության հարցի որոշման համար: Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ 2024 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական գործն ըստ ընդդատության ուղարկվել է Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (...): Իր հերթին՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (նախագահությամբ՝ դատավոր Վ.Մելքոնյանի), հիմնվելով անձի հաշվառման հասցեի վերաբերյալ ենթադրաբար Mulberry համակարգի միջոցով արտահանված, ինչպես նաև՝ մեղադրական եզրակացությանը կից վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների տեղեկանքի «ճշգրտված» օրինակում առկա տեղեկությունների վրա, 2024 թվականի նոյեմբերի 21-ին քրեական գործի տարածքային ընդդատությունը կրկին փոխել է և վարույթն ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ վերը մեջբերված որոշման կայացման պահին թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական գործով մեղադրյալն ունեցել է Արարատի մարզում բնակվող մեկ պաշտպան, իսկ արդեն Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարանի որոշման կայացման պահին՝ Արարատի մարզում բնակվող երկու պաշտպան, ինչը, Դատարանի համոզմամբ, լրացուցիչ և արհեստական հիմքեր է ստեղծել՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու համար: Դատարանի վերջին դատողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելուց հետո մեղադրյալի պաշտպանների թվի ավելացման կամ նվազման հանգամանքը կարող է հանգեցնել նշված հարցում սուբյեկտիվ հայեցողության և, որպես արդյունք, դատական անվերջ շրջապտույտի, ինչն անթույլատրելի է:

Ամփոփելով ասվածը՝ Դատարանը եզրահանգում է, որ կրկին չի հաստատվում վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ Արարատի և Վայոց ձորի մարզերի դատական տարածքում բնակվելու հանգամանքը, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքն առերևույթ բացակայում է, ուստի անհրաժեշտ է թիվ ՍԴ3/0055/01/23 վարույթն ուղարկել Վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ վարույթի տարածքային ընդդատության հարցի որոշման համար: (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

10. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը կրկին փոխելու և քրեական վարույթը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը:

11. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 5, թերթեր 126-13 0:

12. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

12.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

13. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

(14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

14. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

15. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի*

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

15.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

16. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին[7]:

---

[7] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը փաստելով, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության Արարատի և Վայոց ձորի մարզերում բնակվելու հանգամանքը չի հաստատվում, գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է:

Բացի այդ, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է, որ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից ընդդատության հարցը որոշելու պահին մեղադրյալն ունեցել է Արարատի մարզում բնակվող մեկ պաշտպան, իսկ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման կայացման պահին՝ Արարատի մարզում բնակվող երկու պաշտպան, ինչը լրացուցիչ և արհեստական հիմքեր է ստեղծել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ սույն վարույթով առկա է դատական շրջապտույտի վտանգ՝ հաշվի առնելով, որ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը 2024 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ արդեն իսկ արձանագրել է, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է[8]:

17. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը 2024 թվականի հուլիսի 15-ի որոշմամբ արձանագրել է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունիսի 4-ին թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելիս չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Արդյունքում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը որոշում է կայացրել

[8] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

վարույթն ըստ ընդդատության Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին: Վճռաբեկ դատարանի քրեական պալատի վերոգրյալ որոշումից հետո, Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող գործով քննիչի կողմից ներկայացված տվյալների և պաշտպանների թվի ավելացման հիմնավորմամբ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը կրկին փոխելը և վարույթը դարձյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելը, Վճռաբեկ դատարանի քրեական պալատի գնահատմամբ, կրում է խիստ սուբյեկտիվ և ձևական բնույթ, ուստի չի կարող ընդունելի համարվել:

Վերոգրյալի հետ մեկտեղ, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում ընդգծել, որ սույն վարույթով **առերևույթ առկա է դատական շրջապտույտի, գործի ողջամիտ ժամկետում քննության և դրանից ածանցվող այլ իրավունքների խախտման վտանգ**, հաշվի առնելով, որ սույն քրեական գործը 2023 թվականի նոյեմբերից գտնվում է դատարանների վարույթում, սակայն **մինչ օրս գործի քննությունը գտնվում է նախնական դատալսումների փուլում**: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ վարույթի ընդդատության վերաբերյալ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի որոշման առկայության պայմաններում Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունն առանց ծանրակշիռ հիմնավորման կրկին փոխելը չի բխում արդարադատության շահից:

18. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը կրկին փոխելու և վարույթն ըստ ընդդատության Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումն իրավաչափ չէ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՍԴ3/0055/01/23 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ